*Հավելված N 1*
*ՀՀ ԱԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-Ա/ՄԱՍԵՐ4 ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հունիսի 3-ի N1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի հունիսի 3-ի N1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-Ա/ՄԱՍԵՐ4**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-Ա/ՄԱՍԵՐ4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 03.06.2026թ-ին ժամը 08:06:03-ին ստացված հարցադրում/ներ/ը և դրա/նց/ վերաբերյալ 03.06.2026թ-ին տրամադրված պարզաբանում/ներ/ը՝

**Հարցադրում N1:** Հարգելի՛ պատվիրատու, Տեխնիկական առաջադրանքի մեջ մասնավորապես՝ 159-րդ չափաբաժնում նշված է 1-ից 10 լիտրանոց տարաներով: Արդյո՞ք կարող ենք մասնակցել միայն 5 լիտրանոց տարայով: Նախապես շնորհակալ եմ պարզաբանում տրամադրելու համար:

**Պարզաբանում N1:** Ի պատասխան ՀՀ ԱԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-Ա/ՄԱՍԵՐ4 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում՝ 159-րդ չափաբաժնի մասով ստացված հարցմանը, հայտնում ենք, որ առաջարկված 5 լիտրանոց տարաներով մատակարարումը համապատասխանում է տեխնիկական առաջադրանքով սահմանված 1-ից 10 լիտրանոց տարաներով մատակարման պահանջին և հետևաբար՝ ընդունելի է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-Ա/ՄԱՍԵՐ4 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն